ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏ ԱՏ ԱՆՔ

Դասընթաց ՝ Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ուսուցիչ՝ Ռոման Ահմեդով

Թեմա՝ Ինչպե՞ս նպաստել Տուրիզմի զարգացմանը համայնքում և ինչպե՞ս պահպանել համայնքի մշակութային ժառանգությունը:

Մշակույթը մարդու մեջ մարդկության միջոց է:

Կարլ Մարքս:

Ներածություն

Վերջին մի քանի տարիներին հանրապետությունում զբոսաշրջության ոլորտում նկատվում է դրական տեղաշարժ; Զբոսաշրջիկների թվաքանակի ավելացումը ենթադրում է ոչ միայն այս ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպությունների թվաքանակի ավելացում, այլև ծառայությունների որակի բարելավում, ինչը էլ ավելի կխթանի վերջիններիս թվաքանակի աճին: Հաշվի առնելով ոլորտի հետագա միտումները , պետք է բացահայտել առկա կարիքները՝ հատկապես մասնագետների , գործատուների կողմից նրանց նկատմամբ մասնագիտական որակների , հմտությունների պահանջների տեսանկյունից:

Մշակութային ժառանգությունն անցյալից ժառանգված ռեսուրսների խումբ է, որը, սեփականության իրավունքից անկախ, մարդիկ սահմանում են իբրև իրենց մշտապես զարգացող արժեքների, համոզմունքների, գիտելիքների և ավանդույթների արտացոլում և դրանց արտահայտություն: Այն ներառում է շրջակա միջավայրի բոլոր կողմերը, որոնք ժամանակի ընթացքում մարդկանց և վայրերի փոխներգործության արդյունք են: Ժառանգությունը կրող համայնքը բաղկացած է այն մարդկանցից, որոնք արժևորում են մշակութային ժառանգության՝ իրենց նախընտրած առանձնահատուկ կողմերը՝ հանրային գործունեության շրջանակներում պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու նպատակով:

Իրականացրել եմ հարցում համայնքի բնակիչների շրջանում:

Կից ներկայացնում եմ նաև հարցման ձևաթուղթն

ՀԱՏԻՍ ԳՅՈՒՂ- Հատիս գյուղը գտնվում է ՀՀ Կոտայքի Մարզում՝ մարզկենտրոնից 53 կմ հարավ՝ Հատիս լեռան ստորոտին:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

1873թ—548բնակիչ

1897թ—740բնակիչ

1926թ—597բնակիչ

1939թ—1077բնակիչ

1959թ—506բնակիչ

1970թ—369բնակիչ

1979թ—372բնակիչ

1989թ—344բնակիչ

2001թ—450բնակիչ

2011թ—302բնակիչ

2012թ—376բնակիչ/ վերջին տվյալներով

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ— Բնակչությունը այստեղ զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ- Հատիսում պահպանվել են 13-17-րդ դդ. բազմաթիվ միջնադարյան խաչքարեր;

Կան բազմաթիվ խաչքարեր , որոնք կառուցվել են 9-10-րդ դդ, և 12-13 դդ. որոնք գտնվում են մատուռում և գերեզմանի ամ եզրին;

Հուշարձան 2-րդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին- 1975թ. գտնվում է գյուղի սկզբնամասում;

Հատիսը հանդիսանում է բնության հատուկ պահպանվող տարածք;

ՀԱՏԻՍ ԼԵՌ—Լայն. -44726088

Երկ. -40307745

Բարձր. -2528մ ծովի մակարդակից .

Տեսակ-Հանգած հրաբուխ /կոնաձև/

Լեռնաշղթա-Գեղամա լեռներ

Նյութ-Պալեոգենի լավաներ

Լեռն անվանվել է նաև Ատիս, Հադիս, ինչպես նաև Շամիրամ; Գոյություն ունեն լեռան Հատիս կամ Հադիս անվանաձևերի ծագման մի շարք մեկնաբանություններ;

Լեռը նախապես կապված է եղել Արայի պաշտամունքի հետ; Լեռան Շամիրամ անվան ծագումը պայմանավորված է Հատիսի՝ Արայի լեռան դիմաց գտնվելու հանգամանքով և խորհրդանշում է Արա գեղեցիկի և Շամիրամի ավանդապատումի ձևավորման ակունքները;

Ըստ ավանդության այսեղ է Արա Գեղեցիկը հանդիպել Շամիրամին;

Տուրիզմի զարգացումը համայնքում

2021թ-ից Կոտայքի մարզի Հատիս գյուղում է գտնվում " Բագի տուր" հանգստի գոտին, որտեղ առկա են բոլոր պայմանները ընտանիքով, ընկերներով, փոքրիկներով անմոռանալի ժամանց անցկացնելու համար, բազմազան երթուղիները պարգևում են խելահեղ սուր-սուր զգացողություններ, իսկ փոքրիկների համար նախատեսված միակը Հայաստանում անվտանգ կվադրո բուրաններով՝ երեխաները ստանում են վառ տպավորություններով լի զվարճանքի մեծ չափաբաժին;

Ինչպես նպաստել տուրիզմի զարգացմանը համայնքում;

-Պետք է համայնքում կազմակերպել տուրիզմի զարգացմանը նվիրված հանդիպումներ այն համագործակիցների հետ, ովքեր նպաստում են Հայաստանում համայնքների զարգացմանը, նպատակ ունենալով. . . .

* ամրապնդել գոյություն ունեցող տեղական ռեսուրսների ցանցի կարողությունները

*նպաստել եկամտաբեր ինքնագործունեությանն ու աշխատատեղերի ստեղծմանը

պաշտպանել շրջակա միջավայրը՝ ներգրավելով տնտեսության բոլոր ոլորտները

*ստեղծել հարթակ՝ համայնքի տուրիզմով զբաղվող կառույցների փոխշահավետ համագործակցության համար;

;

Հանդիպումներն պետք է անցկացվեն հետևյալ ձևաչափով՝

-Ընդհանուր ներկայացումներ՝ լուսաբանելու համայնքի տուրիզմի զարգացման հնարավորությունները և մասնավորապես խոշընդոտները, համապատասխան իրավական և պետական սահմանափակումները, համայնքի տուրիզմը՝ որպես աշխատատեղերի ստեղծման արդյունավետ շարժիչ ուժ օգտագործելու նախադրյալները;

*Կլոր սեղաններ՝ մասնակիցների հետ քննարկել համայնքի տուրիզմի զարգացման կայուն միջավայրի առաջնահերթությունները՝ որպես տնտեսական աճի շարժիչ ուժ;

*Թեմատիկ այցեր / ագրոտուրիզմ , մշակույթ և ավանդույթներ/

*Սպորտային և արկածային քայլարշավներ

*Փորձագետների շրջայցը համայնք, ծանոթանալու տեղական դերակատարների հետ, ուսումնասիրել համայնքի տուրիզմի զարգացման հնարավոր տարբերակները և բացահայտել նոր հնարավորություններ;

Աշխատել տեղական կառույցների հետ

*Մասնակիցներին ներկայացնել հայ ժողովրդի հյուրասեր ավանդույթներին և ստեղծել փոխշահավետ կապեր

*Արշավները կազմակերպելիս հաշվի առնել շրջակա միջավայրի պաշտպանությունը, ներկայացնել տեղական արժեքներն ու հայ մարդու ապրելակերպի իրական պատկերը

*Ճանապարհորդների ուշադրությունը հրավիրել տնտեսական սոցիալ-մշակութային և բնապահպանական արդի խնդիրների վրա;

Տուրիզմը մարդկանց ժամանակավոր տեղաշարժն է դեպի այլ երկիր՝ հանգստի, ժամանցի, առողջարանային, գործնական կամ ստեղծագործական նպատակներով՝ առանց վճարվող աշխատանք վարելու;

Գյուղական համայնքի տուրիզմը հանգիստն է գյուղական վայրում; Հանգստի այս ձևն զբոսաշրջիկներին, հատկապես քաղաքաբնակներին , թույլ է տալիս գիտելիքներ ձեռք բերել գյուղական տնտեսության վարման վերաբերյալ, ծանոթանալ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակել բնական , թարմ և առողջարար սննդամթերք;Գյուղական համայնքի տուրիզմը անմիջականորեն նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը; Գյուղմթերքների շուկայի ընդլայնմանը, ինչն էլ հանգեցնում է գյուղաբնակների կյանքի բարելավմանը;

ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱՄԱՑՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթը հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Այն ներառում է գիտությունը, արվեստը, արհեստը և, առհասարակ, մարդու կողմից ստեղծած ամեն ինչ:

Մշակույթի ճյուղերն են լեզուն, գրականությունը, ճարտարապետությունը, ֆանդակագործությունը, նկարչությունը, երաժշտարվեստն ու պարարվեստը, թատրոնն ու կինոն և այլն:

Մշակութային ժառանգության պահպանությունը բոլոր երկրներում ազգային պարտավորություն է և այսօր ամենուր հնչող այն հարցը, թե ինչպես վերաբերել հուշարձաններին ու նրանց միջավայրին, չի կարող հետաքրքրություն չներկայացնել նաև Հայաստանի համար, ուր այս բնագավառին իր մարտահրավերներն է հետում տնտեսական զարգացումը: Բազմաթիվ օրինակներ թեև վկայում են, որ հուշարձանների և տեսարժան վայրերի օրենսդրական և մեթոդական պաշտպանվածությունը գրանցել է առաջընթաց, սակայն դեռևս նմանօրինակ զուգահեռներ չունենք, երբ խոսքը վերաբերում է դրանց գործնական պահպանությանը մշակութային տուրիզմի զարգացման համատեքստում:

Հայաստանի շատ շրջաններ ունեն բոլոր նախադրյալներն ու իրական հնարավորությունները էկոտուրիզմի զարգացման համար՝ լանդշաֆտի բարեկարգման միջոցով, ագրոտուրիզմի համար՝ հիմնվելով բացօթյա հանգստի վրա, մշակութային տուրիզմի համար՝ հիմնվելով հուշարձանների և տեսարժան վայրերի վրա;

Մշակութային տուրիզմի միջազգային խարտիան հստակորեն նշում է. «Տուրիզմը կարող է որսալ ժառանգության տնտեսական բնութագիրիչները, դրանք օգտագործել այդ իսկ ժառանգության պահպանության համար՝ ստեղծելով նոր ռեսուրսներ, զարգացնելով կրթությունը և ուղղվածություն տալով քաղաքականությանը: Աշխարհի շատ երկրների ու ռեգիոնների համար տուրիզմն այսօր հիմնական տնտեսական նպատակ է և, հաջող կառավարման դեպքում, կարող է դառնալ զարգացման կարևոր գործոն»:

Գյուղական, մասնավորապես բարձրլեռնային, բնակավայրերի տնտեսական զարգացման խթանող գործոն է ընդունված տուրիզմի ոլորտը: Բայց, եթե նկատի ունենանք խորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն մնացած տուրիստական ցանցի քայքայվածությունը և համակարգի կառուցվածքի փլուզումը, ինչպես նաև տուրիստների հոսքը կանխատեսող չափորոշիչների փոփոխությունը, պարզ է դառնում, որ այդ համակարգը վերստին պետք է կայանա: «Տուրիստական խրախուսման ծրագրերը պետք է պահպանեն և արժևորեն բնության ու մշակութային ժառանգությունը». սա է մշակութային տուրիզմի միջազգային խարտիայի սկզբունքներից վերջինը, բայց և առաջնայինը: Մենք պետք է կարողանանք հնարավորինս խույս տալ հուշարձանների համար սպառնալի պարտադրանքներից, ներկա կարիքները չպետք է խաթարեն ապագա սերունդների կարիքները: Մասնավորապես փաստ է, որ հուշարձանները, տեսարժան վայրերը, քաղաքային համակառույցները և բնապատկերը շրջափակող միջավայրի կառավարումը պահանջում է մոտեցումներ, որոնք պետք է բխվեն բազում շահերի, ներառյալ սեփականատերերին: Դրանք շատ դեպքերում հանգեցնում են հուշարձանների մշակութային և ֆիզիկական միջավայրը վնասող սոցիալ–տնտեսական ձևափոխումների, ինչի հետ շատ դեպքերում առնչվում ենք նաև Հայաստանում: Հատուկ ուշադրության և աճող մտահոգության առարկա է հանդիսանում նաև բնական աղետների հետևանքով ամայացած ու տուժած վայրերի վերակառուցումը. հրատապությունը հաճախ պարտադրում է մի կողմ թողնել մշակութային ընդգրկումներն ու

ավանդույթները՝ ի նպաստ նոր տեխնոլոգիաների: Այս ամենը կրկին պարտադրում է հրաժարվել որոշ սկզբունքներից;

Կից ներկայացնում եմ նաև հետազոտական աշխատանքի սահիկը